

Պատարաղից յետոյ Վեհափառ Հայրապետի
հրամանով քարոզ խօսեց այդ օրուայ տօնի
առթիւ Հ. Կարապետ վարդապետ:

Նյոն օրը ուխտ էին գնացել Օշական
Ճեմարանի աշակերանները թէ և Էջմիածնից
և թէ Թիւրական ամարանոց գնացողները ու
բոնք միարանութեան անդամների և ուսու-
ցիչների հետ միամին ճաշեցին վանքի սցցում:

Յունիսի ընթացքում Մայր Աթոռ ժա-
մանեցին Արժ. Գարեգին Սամունեանց,
Բագրատ Վարդապարեանց և Մատթէոս վար-
դապետները, Վերջինս մի քանի օրից յետոյ
կրկին ուղերուեցաւ իւր պաշտօնատեղին:

Մայր Աթոռից մեկնեցին տկարութեան
պատճառով՝ Սինօղի անդամ Արժ. Յուսիկ
վարդ, Հմայեակ վարդ, Գարեգին վ. Յով-
սէֆեան և Բարդուղիմոս վարդ:

Մայր Աթոռին պատկանող գիւղերն այս
տարի կապալով շարուեցան, այլ նշանակուե-
ցան յատուկ կալաշափներ միարաններից, որոնք
անմիջապես գիւղացիներից պիտի ստանան
և Էջմիածնի հասցյաները:

Վաղարշապատի համար նշանակուած է
Արժ. Եղիա վարդապետ, Օշականի համար
նշանակուած Արժ. Ստեփան վարդ, ի տկա-
րութեան պատճառով այնտեղ ուղարկուեցաւ
Շնորհ. Գրիգոր սարկաւագ, Եղուարդ ուղար-
կուել է Արժ. Դուկաս վարդ, և Մաստարայ
Արժ. Գետրոս վարդապետը:

ՏԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ.

Այս տարի ևս նախորդ տարիների նման
Սորին Սրբութեան հրամանով Ճեմարանում
ամառը մնացող աշակերանների մի մասն ամա-
րանոց ուղարկուեցաւ Թիւրական Հասցյան և
Գեղարդայ վանքերը:

Բացի սոցանից մեծ աշակերաններից մի
խումբ նախապարհորդելու զնաց գեղի Սեան
և իւր շրջակայքը խոկ ամսոյս 11-ին Ծեսուշ
Հ. Կարապետ վարդապետը մի խումբ Լուարան-
ցոց հետ ճանապարհորդութեան ելաւ գեղի
Երևանայ և Արցախի թեմերի վանքերը:

ՏԱՅԱԿԱՀԱՅՅՔ.

Կրօնական ժողովը 6 յունիս սովորական
նիստը գումարեց Պատրիարքարանի մէջ, Նախագա-
հութեամբ Ա. Պատրիարք Հօր և ատենապետու-
թեամբ Տ. Գրիգորիս արք եպիսկոպոսի Յովհաննէ-
սեանի:

Ժողովը հրաւիրելով թուրքերէն թղթակցու-
թեանց դիւնի տնօրէն Կարապետ էք. Խաչատու-
րեանը, լսեց գտական նախարարութեան անցեալ
շարթու հասած Թէզքէրէն և այս առթիւ բաւա-
կան տան խորհրդակցութիւններ ընելով քիչ
ժամանակ ունեցաւ զրադելու իր օրակարգին վրայ
գտնուած խնդիրներով:

Էտիինէի տառաջն տեղապահ Պօղոս վարդա-
պետ Խօլտամեանի խորագիրը նկատողութեան
առնելով, որոշեց դրել իրեն որ սպասէ ժամանակ
մը ևս, և հարկ եղած պատուէրները տալով Արսէն
քահանայի և զգուշացնելով իր ընթացքէն, յանձ-
նարարեց Գաւառ. Արշութեան որ տեղապահին
ամսականները անշապահ վճարուին:

Արշակ և Յովհաննէս սարկաւագներուն թա-
փառական վիճակը նկատողութեան առնելով, որո-
շեց յառաջիկայ նիստին կանչել Կրօն. Ժողովը
ատեանը:

Վահայ Ծալպան գիւղի Ա. Սահակ Եկեղե-
ցին համար յատկապէս պատրաստուած Ա. Աս-
տուածածնայ պատկեր մի արտօնեց յղել յիշեալ
Եկեղեցին:

Ժողովը որոշեց յղել Յարութիւն սարկաւագը
Ա. Գանիէլ Վահապէն վանահայր Տ. Ստեփանոս
Կափիսոսիսի և յանձնարարել որ առանց կեդրոնէն
հրաման ստանալու յիշեալ սարկաւագը վարդապետ
չձեռնադրէ:

Սկիւտարի Թաղ. Խորհուրդը նկատելով որ
Ելեմթեան Սրբազնի վախճաննելէն ի վեր մնա-
յուն քարոզիչ մը չունին, խնդրած է Պատրիար-
քարանէն որ Գալբագնեան Խզնիկ վարդապետը Ա.
Խաչ Եկեղեցւոյ քարոզիչ կարգուի, ողբան ժամա-
նակ որ մնայ նոյն թաղին մէջ:

Խառն Ժողովը գումարուեցաւ 9 յունիս
Դաշտից Խորհրդարանին մէջ, Նախագահու-
թեամբ Ա. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ
Խօլտամեան Ստեփան փաշայի:

Կարգացուեցաւ վերջին անգամ Պատական
նախարարութեամբ ուղղած մէկ րեզիւէն, և հարկ
եղած հրահանդները տրուեցան թուրքերէն թղթակ-
ցութեանց զիւնապետ Խաչատուրէան Կարապետ
էք. ի.

Ժողովը Բալուի տառաջն տեղապահ Վարդապ-
ետ քարդապետի ծերութեան պատճառով տուած հրա-
ժարականը նկատողութեան առնելով, Կրօն. Ժո-

զովին նախորդ որոշումը բանաւոր համարեց և Ֆրանկիւլեան Նիկողոս վարդապետը հաստատեց Բալուի առաջն տեղապահութեան պաշտօնին մը ջ:

Նկատելով որ Ակնայ առաջն տեղապահին և գաւառ. Վարչութեան մէջ տիրող անհամաձայնութենէն միայն յառաջ եկած է Արիստակէս վարդապետի հրաժարումը, որոշեց չեղեալ համարիլ գաւառին տուած որոշումը և ծանուցանել միանգաւմայն տեղւոյն Գաւառական Վարչութեան: որ իր ձեռնհասութենէն վեր համարուած օրինական ուղղութենէն չշեղի:

Խառն Ժողովը այս առթիւ նկատելով որ շատ գաւառներու մէջ գործերը միևնույն կերպով կը լնանան, և Առաջնորդներ գաւառ. Ժողովներ կը լուծեն, և Գաւառ. Ժողովներ ալ առաջնորդներ կը հրաժարեցնեն, առանց կանխաւ պատճառները Կեդր. Վարչութեան ծանուցանելու, որոշեց Պատր. Իրջարերականով մը ծանուցանել Գաւառ. Վարչութեանց և Առաջնորդներու, որպէս զի օրէնքին գծած ուղղութենէն չշեղին և այդ տրամադրութեան համեմատ, Կեդր. Վարչութենէն հրահանդստանալով գործեն, զանազան գժուարութիւններ չծագելու համար:

Որոշուեցաւ Զարսանճագի առաջնորդական ընտրութեան համար ընտրելիների ցանկ մը դրկել:

— Ազթամարայ Ենդապահ. Սրսէն վարդապետ Պատրիարքարան զիր մը դրկելով, ամժոյին պատշաճնեալ և Պատրիարքարանի մէջ ի պահ գտնուած 470 սուէլի չափ գումարը պահանջած է: Պատրիարքարանէն պիտի պատասխանուի թէ զիշերօթիկ վարդարանի մը հաստատութեան միայն կրնայ յատկացուիլ նոյն գումարը:

— Բուլպեան Գերապայծառ՝ որ Վիեննայի Միջարեանց Միարանութեան երկու հատուածներուն միջն ծագած վէճը քննելու համար Պոլիս եկած էր: շարաթ մեկնեցաւ մայրադադարէս:

— Կրօնական Ժողովը երէկ գումարուեցաւ Ազգ. Պատրիարքարանի մէջ, առենապետութեամբ Տ. Քրիզորիս արքեպիսկոպոս Յովհաննէսէնի:

Ժողովը կարգ մը եկեղեցական և ամուսնական խնդիրներ նկատողութեան առնելով ի մէջ այլոց հետեւալ տնօրինութիւնները բրաւ:

1. Պայազիտի ազգայնոց կողմէ զրկուած Ներսէս քահանայի դէմ երկար ամրաստանագիրը նըշկատողութեան առնելով՝ որոշեց զրել Արքոյ Առաջնորդին, իրողութիւնը քննելով ստուգէլ և ծանուցանել ժողովին:

2. Տեղեկանալով որ Կտուց անապատի չորս միարանները կը ինքը որ Ստեփան Վարդապետ Աղապատեանը Վահահայր կարգուի, որոշեց այս մասին Տ. Ներսէս եպիսկոպոսի կարծիքը առնել:

3. Արշակ և Յովհաննէս սարկաւագները ըստ վերջին որոշման Ժողովին առեանը կանչուելով:

իրենց հարկ եղած հարցումները ուղղուելէ ետքը, որոշեց Արշակ սարկաւագը Տ. Կիրակոս եպիսկոպոսին զրկել, որպէս զի Քրիստոն վանքը յղէ, որուն միարանութեան կը վերաբերի, իսկ Յովհաննէս սարկաւագը թոյլատրեց ժամանակ մը ևս Պոլիս մնալու, որպէս զի Հիւանդութիւնը դարմանէ և ըստ այնմ հարկ եղած որոշումը տրուի իրեն մասին:

— Կպաստից Յանձնածողովն ալ իր շարաթական նիստը գումարեց երէկ, նախագահութեամբ Տ. Վահրամ Մանկունի Սրբազնի: Բայց որովհետեւ Ս. Պատրիարքը Հայրը իր հիւանդութեան պատճառաւ չէր կը առաջարկ նախագահին ժողովին, Ժողովը իր նախագահին ներկայութեան թողլով կարգ մը որոշումներու գործադրութիւնը, զբաղեցաւ միմիայն գաւառներէ ու որբանոյներէ եկած նամակներու, և տեղեկագրելու լնթերցմամբ, և Տիարպէքիրի առաջն տեղապահին զրկուած զրութենէ մը տեղեկացաւ որ, ըստ յանձնարարութեան, զրկուած նպաստներով և որոշեալ թոշակներով Հայրօի և Միւլֆարղընի վարժարանները բացուեր են, Ժողովը կարդաց նաև Խորեան Գրիգոր Էֆ.ի քանի մը գաւառներու որբանոցներու վիճակին նկատմամբ, նամակներէ քաղելով ըրած մէկ ուսումնասիրութիւնը, և անոր կատարած քննութեանց արդիւնքին հետ, հարկ եղած զիտողութիւններն ալ հոգարարձութեանց գրիկ որոշեց:

Երուսալէմէ կը զրէն յունիս 8 թուականով. և Ակնայ նախին առաջնորդ Տ. Յակոբ վարդապետ Յորիկեան որ 1898 զեկուեմբերին Ա. Քաղաքս եկած էր՝ յուստ և յերկրագութիւն Ա. Տեղեաց և մէկ քանի ամսէ հետէ, իր կողմանէ արուած ինդրագրի մը համաձայն, ընդունուած էր ի շարս Միարանաց Միարուեանց, երէկ առաւօտ ժամը 2-ին, հանգեաւ ի տէր՝ հասակի 72 ամաց և այսօր յուղարկաւորութեան հանգէօը կատարուելով՝ թաղուեցաւ Ա. Փրկչի գերեզմանատան մէջ, Տ. Յակոբ վարդապետ ուսեաւ չէր, սակայն հեղարաց, խհեմ՝ զդաստ և ամէնուն հետ վարուիլ զիտողող անձ մըն էր: Իր վարչական հմտութեանը թէպէտ ի մօտոյ ծանօթութիւն ունինք՝ սակայն մըր Ակնեցի ազգայինք աւելի որոշ գաղափար մը կրնան տալ, իր եկեղեցական բազմամեայ ասպարէզին մէջ զլիսաւոր պաշտօնն է Ակնայ Առաջնորդութիւնը՝ զոր վարեց խաղաղութեամբ՝ իրրե Հայր իր վարած հօտին՝ որուն, ինչպէս կը լոենք Թողած է մաղագ մը և մթերանոց մը և մասնաւոր գումար մըն ալ, իրրե Միարան Ա. Երուսալէմի:

